

## Շարժական ինտերնետի ծառայության մատուցման պայմանագիր

ՀՀ,

թ

«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ն, այսուհետ «Օպերատոր», ի դեմս \_\_\_\_\_ մի կողմից և  
/անձնագիր՝ \_\_\_\_\_, տրված՝  
\_\_\_\_\_, \_\_\_\_\_ ի կողմից, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից,  
երկուսը միասին, այսուհետև՝ «Կողմեր», կնքեցին սույն Պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր»)՝  
հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան և ընդհանուր դրույթներ

1.1 Համաձայն սույն Պայմանագրով Բաժանորդի կողմից նախընտրված սակագնային տարբերակի /փաթեթի/ Օպերատորը Բաժանորդին մատուցում է էլեկտրոնային հաղորդակցության շարժական ինտերնետ հասանելիության ծառայությունը (այսուհետ՝ «Շարժական ինտերնետի ծառայություն»), ինչպես նաև 1.2-նշված /բաժանորդի կողմից ընտրված/ սակագնային փաթեթով նախատեսված շարժական կապի այլ ծառայություններ /այսուհետ՝ «շարժական կապի այլ ծառայություններ»/:

Շարժական ինտերնետը և շարժական կապի այլ ծառայությունները միասին նշելու համար սույն Պայմանագրի շրջանակում կօգտագործվի «Ծառայություններ» հասկացությունը: Ծառայությունները մատուցվում են Օպերատորի կողմից սահմանված սակագներով և պայմաններով, որոնք ներկայացված են Օպերատորի [www.beeline.am](http://www.beeline.am) ինտերնետային կայքում և կազմում են սույն Պայմանագրի անբաժանելի մաս:

1.2  
Սույն Պայմանագրի կնքման պահին Բաժանորդի կողմից ընտրվել է շարժական ինտերնետի \_\_\_\_\_ սակագնային փաթեթի (այսուհետ՝ «Սակագնային փաթեթ») \_\_\_\_\_ ամսական ծավալը:

1.3 Շարժական ինտերնետի ամսական վարձն է՝ \_\_\_\_\_ դրամ (ներառյալ ԱԱՀ)<sup>[1]</sup>:

1.4 Եթե սույն պայմանագիրը կնքելու հետ մեկտեղ Բաժանորդին տրամադրվում է վերջնական սարքավորում, ապա Բաժանորդի վրա տարածվում են սույն Պայմանագրի 5

– **րդ բաժնում նախատեսված Վերջնական սարքավորման առք ու վաճառքի պայմանները:** <sup>[1]</sup> Շարժական ինտերնետի տվյալ Սակագնային փաթեթի բոլոր պայմանները և հնարավորությունները գետեղված են [www.beeline.am](http://www.beeline.am) կայքում

### 2. Ծառայությունների մատուցում

2.1 Սույն Պայմանագրով Ծառայությունների մատուցումն ապահովվելու նպատակով Օպերատորը Բաժանորդին օգտագործման իրավունքով տրամադրում է SIM քարտ, և այդ SIM քարտին վերագրված հեռախոսահամար: SIM քարտը և հեռախոսահամարը հանդիսանում են Օպերատորի սեփականությունը և չեն կարող փոխանցվել այլ անձի՝ առանց Օպերատորի գրավոր համաձայնության:

2.2 Ծառայությունները մատուցվում են Օպերատորի ցանցի և ծառայությունների մատուցումն ապահովվելու համար ներգրավված այլ ցանցերի առկա տեխնիկական հնարավորությունների շրջանակներում:

2.3 Ծառայությունները Օպերատորի կողմից մատուցվում են շուրջօրյա, առանց ընդմիջումների, բացառությամբ վերանորոգման և/կամ պրոֆիլակտիկ աշխատանքներով և/կամ վթարով և/կամ ֆորս-մաժորով պայմանավորված ընդմիջումների:

2.4 Ծառայությունները կարող են վատթարանալ, ընդհատվել կամ ուղեկցվել խանգարումներով շինությունների հարևանությամբ կամ դրանց ներսում, թունելներում, նկուղներում կամ ստորգետնյա այլ շինություններում, կապված տեղանքի առանձնահատկությունների, օդերևութաբանական պայմանների հետ Օպերատորից անկախ և վերջինիս մեղքը բացառող այլ պատճառով:

2.5 Մատուցվող ծառայությունների արագությունը կախված է տարածքի ռելիեֆից, առկա ռադիոձածկույթից, օգտագործվող սարքի տեխնիկական հնարավորություններից, ցանցի ծանրաբեռնվածությունից, սակագնային փաթեթի ցուցանիշներից և այլ արտաքին գործոններից: 2.6 Օպերատորը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի շրջանակներում ծառայությունների թերությունների համար, որոնք պայմանավորված են Բաժանորդի կողմից անսարք կամ չսերտիֆիկացված բաժանորդային սարքավորումների օգտագործմամբ:

2.7 Բաժանորդին մատուցվող ծառայությունների որակը կարող է պայմանավորվել ներպետական և միջազգային այլ Օպերատորների սարքավորումների որակով և վերջինների ցանցերի առանձնահատկություններով, որոնք Օպերատորի հսկողությունից դուրս են:

2.8 Օպերատորը պարտավորվում է սույն Պայմանագրի համաձայն մատուցվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի և տեխնիկական պայմանների, հեռախոսային խոսակցության փաստի, դրա ժամանակի, տևողության, վճարման ենթակա գումարի չափի և հեռախոսային խոսակցության փաստի վերաբերյալ այլ տեղեկությունները համարել և պահել գաղտնի: Օպերատորը իրավասու է բացահայտել այդ տեղեկությունները ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

### **3. Պայմանագրի գինը, հաշվարկման և վճարման կարգը**

3.1 Սույն պայմանագրի համաձայն մատուցվող ծառայությունների դիմաց Բաժանորդը վճարում է 1.3-րդ կետով նախատեսված ամսական վարձը և տվյալ հաշվետու ամսվա ընթացքում օգտագործված ծառայությունների դիմաց հաշվարկված գումարը՝ ըստ 1.2-րդ կետում նշված սակագնային փաթեթի գների: Եթե հաշվետու ամսվա ընթացքում Բաժանորդը օգտագործել է Օպերատորի կողմից մատուցվող սույն Պայմանագրով չնախատեսված այլ ծառայությունները, ապա նա պարտավոր է վճարել նաև դրանց համար՝ Օպերատորի կողմից սահմանված չափով և կարգով<sup>[2]</sup>:

3.2 Մատուցվող էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ծավալը որոշվում է Օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա և/կամ այլ Օպերատորի բիլինգային համակարգերի գրանցումների հիման վրա՝ Բաժանորդին ռոումինգի ծառայությունների մատուցման դեպքում:

3.3 Օպերատորը յուրաքանչյուր ամիս ներկայացնում է բաժանորդին հաշիվ՝ նախորդ հաշվարկային ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների վերաբերյալ: Հաշիվը համարվում է Բաժանորդին պատշաճ ներկայացված, եթե Օպերատորի առկա տեխնիկական հնարավորությունների առկայությամբ պայմանավորված եղանակով Բաժանորդի համար դրանց ծանոթանալու/ստանալու հնարավորություն է ստեղծել: Բաժանորդի կողմից հաշվի չստանալը կամ ստացման ուշացումը չի կարող հիմք հանդիսանալ Բաժանորդի կողմից Ծառայությունների դիմաց վճարումները չկատարելու, կամ վճարման ժամկետները հետաձգելու համար:

3.4 Ծառայությունների դիմաց վճարը Բաժանորդի կողմից ենթակա է վճարման հաշվում նշված ժամկետից ոչ ուշ: Բաժանորդի փոխարեն այլ անձի կողմից կատարված վճարումը համարվում է Բաժանորդի կողմից կատարված վճարում:

3.5 Բաժանորդի կողմից սույն պայմանագրով սահմանված վճարումների ժամկետները խախտելու դեպքում Օպերատորն իրավունք ունի սահմանափակել սույն պայմանագրով ծառայությունների մատուցումը՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ դադարեցնելով ծառայությունների մատուցումը:

3.6 Եթե մինչ սույն պայմանագրի լուծումը Բաժանորդը չի կատարել իր դրամային պարտավորությունները, Օպերատորն իրավունք ունի հաշվանցել Բաժանորդի չօգտագործած դրամական միջոցներից՝ ծառայությունների դիմաց առաջացած պարտքերը մարելու հաշվին: 3.7

Բաժանորդի կողմից սույն պայմանագրից առաջացած դրամային պարտավորությունները սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի պարտքերը բռնագանձելու ուղղությամբ ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ

նախատեսված միջոցները, ներառյալ դիմել դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով: [2]  
Օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների ցանկը, պայմաններն ու սակագները զետեղված են Օպերատորի պաշտոնական կայքում [www.beeline.am](http://www.beeline.am)

#### **4. Պայմանագրի պայմանների, սակագնային փաթեթի պայմանների փոփոխություններ**

4.1 Օպերատորն իրավունք ունի միակողմանի փոփոխել և/կամ լրացնել սույն պայմանագրի և սակագնային փաթեթի պայմանները պայմանագրի սույն բաժնով նախատեսված կարգով:

4.2 Սույն պայմանագրի պայմանները, սակագնային փաթեթի պայմանները Օպերատորի կողմից միակողմանի կարող են փոփոխվել և/կամ լրացվել՝ Օպերատորի բաժանորդների սպասարկման կետերում, Օպերատորի ինտերնետ կայքում, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով համապատասխան հայտարարություն հրապարակելու ճանապարհով:

4.3 Սույն պայմանագրի պայմանների, սակագնային փաթեթի պայմանների փոփոխությունները ուժի մեջ են մտնում դրանց մասին հայտարարությունների հրապարակման պահից 10 օրացույցային օր անց, եթե փոփոխություններն ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ հայտարարությամբ: Եթե նշված ժամկետի ընթացքում Բաժանորդից չի ստացվում Օպերատորի հետ կնքված պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը սույն պայմանագրի պայմանների, սակագնային փաթեթի պայմանների համապատասխան փոփոխությունները համարվում են Բաժանորդի կողմից ընդունված և համաձայնեցված:

#### **5. Վերջնական սարքավորման առք ու վաճառքի պայմանները [3]**

5.1 Սույն Պայմանագիրը կնքելով Օպերատորը Բաժանորդին ի սեփականություն հանձնման-ընդունման ակտով կամ այլ, հանձնման փաստը արձանագրող փաստաթղթով հանձնում է Beeline 4G WiFi երթուղիչն իր կոմպլեկտով, այսուհետ՝ “Wi-Fi երթուղիչ”, իսկ Բաժանորդը սույն Պայմանագիրը կնքելու պահին պարտավորվում է վճարել դրա դիմաց 100 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) և կատարել սույն բաժնում նշված այլ պայմանները:

5.2 Wi-Fi երթուղիչը Բաժանորդին հանձնելու պահից դրա պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը կրում է Ձեռքբերողը:

5.3 Wi-Fi երթուղիչի համար սահմանվում է 12 ամսյա երաշխիքային ժամկետ, Wi-Fi երթուղիչը Բաժանորդին հանձնելու պահից: Երաշխիքային ժամկետի ընթացքում Wi-Fi երթուղիչը թերությունների հայտնաբերման դեպքում Բաժանորդը իրավասու է դիմել Օպերատորին՝ ներկայացնելով Երաշխիքային կտրոնը:

5.4 Բաժանորդը պարտավոր է Օպերատորին վճարել սույն Պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ երթուղիչի առուվաճառքի հայտարարված գնի, որը կազմում է

\_\_\_\_\_ դրամ (ներառյալ ԱԱՀ) և սույն Պայմանագրի 5.1-ին կետում նշված գնի տարբերությունը, եթե՝

5.5 Սույն Պայմանագրի 5.5-րդ կետում նշված ժամկետը ավարտվելու ամսաթվից 18 ամսիների ընթացքում միակողմանի լուծում է սույն պայմանագիրը՝ ներառյալ սույն պայմանագրի 1.2-րդ կետով նախատեսված սակագնային փաթեթը փոփոխելու դեպքում:

5.6 “5.4.1” կետում նշված ժամկետում Պայմանագիրը միակողմանի լուծում է Օպերատորը՝ Բաժանորդի կողմից Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները խախտելու պատճառով,

5.7 Պայմանագրի 5.5 կետում նշված դեպքում՝ երթուղիչի անսարքության պարագայում:

5.7 Բաժանորդն իրավունք ունի սույն Պայմանագիրը կնքելու պահից 5 օրվա ընթացքում լուծել Պայմանագիրը, հետ վերադարձնելով երթուղիչը, բացառությամբ այն դեպքերի, երբ երթուղիչը պայմանագրի դադարեցման պահին անսարք վիճակում է, որի պատճառն է հանդիսացել Բաժանորդի կողմից երթուղիչի շահագործման կանոնների խախտումը:

5.8 Այն դեպքերում երբ բաժանորդի պայմանագիրը բացառության հիմունքներով վերակնքվում է (3.5 կետով սահմանված պայմանագրի խզման դեպքերում)՝ 5.5 կետով սահմանված վերադարձի պայմանները չեն գործում:

5.9 Բաժանորդը ընդունում և համաձայնվում է, որ սույն պայմանագրի 5.5-րդ կետով սահմանված պայմաններով Wi-Fi երթուղիչը վերադարձնելու դեպքում, նա պարտավորվում է վճարել սույն Պայմանագրով իրեն մատուցված ծառայությունների համար:

5.10 Սույն Պայմանագրի 5.4-րդ կետում նախատեսված դեպքում, գումարը վճարելու համար Օպերատորը Բաժանորդին է ներկայացնում հաշիվ-ապրանքագիր: Բաժանորդի վճարումը կատարում է Հաշիվ-ապրանքագրում նշված ժամկետում: Գումարը համարվում է վճարված այն Վաճառողի հաշվարկային հաշվին կամ դրամարկղ մուտքագրման փաստով:

5.11 Wi-Fi երթուղիչը նախատեսված է միմիայն Օպերատորի կողմից մատուցվող շարժական ինտերնետից օգտվելու համար:

[3] Սույն գլխով նախատեսված պայմանները տարածվում են միայն այն բաժանորդների վրա, ովքեր սույն պայմանագիրը կնքելու հետ մեկտեղ ձեռք են բերել վերջնական սարքավորումը (Wi-Fi երթուղիչ):

## 6. Պայմանագրի լուծում

6.1 Բաժանորդն իրավունք ունի ցանկացած պահին միակողմանի լուծել սույն Պայմանագիրը՝ լուծման պահից առնվազն 7 օրացույցային օր առաջ գրավոր ծանուցելով օպերատորին:

6.2 Օպերատորն իրավունք ունի սահմանափակել կամ դադարեցնել սույն պայմանագրով ծառայությունների մատուցումը և միակողմանի լուծել սույն Պայմանագիրը՝ Բաժանորդի կողմից դրամային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում:

Ծառայությունների ողջ ծավալով մատուցումը Օպերատորը վերսկսում է միայն Բաժանորդի կողմից խախտումները ամբողջությամբ վերացնելու դեպքում եթե Պայմանագիրը չի լուծվել:

6.3 Անկախ Պայմանագրի լուծման հիմքերից, Պայմանագրի լուծման պահից Կողմերի պարտավորությունները դադարում են, բացառությամբ սույն պայմանագրից առաջացած Բաժանորդի կողմից չկատարված դրամային պարտավորությունների:

## 7. Պատասխանատվություն

7.1 Կապի խափանումների, այդ թվում կապի որակի վատթարացման և/կամ ցանցային սարքավորումների անաշխատունակության համար Օպերատորը պատասխանատվություն է կրում միայն եթե խափանումները տեղի են ունեցել Օպերատորի մեղքով:

7.2 SIM քարտի կորստի (այդ թվում՝ գողություն, կողոպուտ և այլն) դեպքում Բաժանորդը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել Օպերատորին, իսկ Օպերատորը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ և ողջամիտ միջոցներ՝ Բաժանորդի ծանուցումը ստանալու պահից 24 ժամվա ընթացքում նրան մատուցվող ծառայությունների ժամանակավոր դադարեցման համար:

7.3 Ինտերնետ ցանցում առկա նյութերը, տեղեկատվությունը, ծառայությունները և ապրանքները օգտագործելու, ներառյալ համակարգչային վնասակար ծրագրերի ներթափանցման արդյունքում ծագած ցանկացած հետևանքի ռիսկը կրում է Բաժանորդը ինքնուրույն:

## 8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

8.2 Սույն պայմանագիրը ստորագրելով՝ Բաժանորդը հավաստում է, որ ծանոթացել է սույն Պայմանագրի բոլոր դրույթներին, Սակագնային փաթեթի պայմաններին և ընդունում է դրանք: 8.3 Բաժանորդի կողմից սույն պայմանագրից առաջացած դրամային պարտավորությունները սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի պարտքերը բռնագանձելու ուղղությամբ ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցները, ներառյալ դիմել

դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով: Օպերատորն իրավունք ունի սույն կետում նշված պահանջի իրավունքը զիջել կամ իրավունքի իրագործումը հանձնարարել երրորդ անձանց: Ընդ որում, սույն Պայմանագիրը կնքելով, Բաժանորդը ընդունում և համաձայնվում է, որ պահանջի իրավունքը զիջելու կամ իրավունքի իրագործումը երրորդ անձանց հանձնարարելու դեպքում Ընկերություն կփոխանցի պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը և կհաղորդի պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող Բաժանորդին վերաբերող այլ ցանկացած տեղեկությունները /ներառյալ անձնական տվյալներ/ երրորդ անձանց, ի օգուտ որոնց զիջվել է պահանջի իրավունքը և/կամ հանձնարարվել է իրավունքի իրագործումը:

8.4 Սույն Պայմանագիրը կնքելով Բաժանորդը տեղեկացվում է, որ Օպերատորը կարող է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով վարկային բյուրոներին տրամադրել Բաժանորդին վերաբերող սույն պայմանագրից բխող վարկային տեղեկատվությունը:

8.5 Սույն պայմանագիրը կնքելով Բաժանորդը տալիս է Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելու համար Օպերատորի կողմից բաժանորդի անձնական տվյալները մշակելու, օգտագործելու, ինչպես նաև երրորդ անձնաց /ներառյալ՝ այլ երկրներ/ փոխանցելու համաձայնությունը: Սույն պայմանագիրը կնքելով Բաժանորդը հավաստում է, որ Օպերատորի կողմից ծանուցված է Բաժանորդի անձնական տվյալները մշակելու Օպերատորի մտադրության, մշակման իրավական հիմքերի, նպատակի ինչպես նաև “Անձնական տվյալների մասին” ՀՀ օրենքով նախատեսված ծանուցմանը վերաբերող այլ տեղեկությունների մասին:

8.6 Սույն պայմանագիրը կնքված է երկու հավասարազոր օրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ:

**«Օպերատոր»**  
**«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ**

**«Բաժանորդ»**

Ստորագրություն

Ստորագրություն

Հաստատում եմ, որ սույն Պայմանագրով  
եմ բերել նաև Պայմանագրում նշված

ծառայությունից բացի ձեռք  
երթուղիչը

Երաշխիքային կտրոն / Гарантийный талон N

Սարքի անվանումը /մոդելը \_\_\_\_\_  
Наименование устройства/ модель

Գործարանային համարը \_\_\_\_\_ Заводской  
номер

Վաճառքի ամսաթիվը \_\_\_\_\_  
Дата продажи

Երաշխիքային ժամկետ\* \_\_\_\_\_ տասներկու ամիս / двенадцать месяцев  
Гарантийный срок

Վաճառող \_\_\_\_\_  
Продавец \_\_\_\_\_ ստորագրություն / \_\_\_\_\_

Գնորդ \_\_\_\_\_  
Покупатель \_\_\_\_\_  
ստորագրություն \_\_\_\_\_

\*Բաժանորդի դիմումի համաձայն երաշխիքային ժամկետում գտնվող վերը նշված Wi-Fi երթուղիչը ընդունվում է տեստավորման «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ կողմից և անհրաժեշտության դեպքում փոխարինվում է նորով՝ (տրվում է նոր երաշխիքային ժամկետ) բացառությամբ այն դեպքերի երբ Wi-Fi երթուղիչի վնասվածքի համար պատճառ է հանդիսացել դրա շահագործման կանոնների խախտումը:

\*При обращении абонента в гарантийном сроке вышеперечисленного Wi-Fi роутера, роутер принимается ЗАО "БЕОН Армения" на тестирование и при необходимости, заменяется новым (предоставляется новый гарантийный срок), за исключением тех случаев, когда повреждение Wi-Fi роутера имело место вследствие нарушения правил его эксплуатации.